

1843 ԲԱԶՄԱՎԵՊ 1914

\* ՀԱՆԴԻՍԱՐԱՆ \*

ՀԱՅՈՐ  
ՀԲ  
ՆՈՅ. - ԻՆԿ.  
թ. 11-12

ԱԶԳՈՒԹԻՒՆ - ԲԱՆԱԱՆԻՐԱԿԱՆ - ԳՐԱԿԱՆ - ԳԻՏԱԿԱՆ  
Ժ Ժ Ժ Ժ Ժ ԱՐԱԽԵՐՃ Ժ Ժ Ժ Ժ Ժ Ժ

ԾԻՍԱԿԱՆ

ՍՐԲԱԶԱՆ ՏԵԱՌՈՆ ՄԵՐՈՅ

ՏԵԱՌՈՆ ԲԵՆԵԴԻԿՏՈՍԻ ՊԱՊԻՆ ՉՈՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴԻ

ԹՈՒՂ. ՀԱՅՐԱԿԱՆ Ա. ՄԻՍՈՆԱՐՍ ԿԱՐԳԵԱԱ. ԸՆԴ ԱՐԵՒԵԼՈ

ՑԱՂԱԳՅ ՊԱՀՊԱՆՈՒԹԵԱՆ ՆԻՍԻՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՑՈՒՆԱՑ ԵԿ ԱՅԼՈՅ ԱՐԵՒԵԼԵԱՅ

○○○

1. Յաղագս բղխման Հոգւոյն Սրբոյ ի տութիւնս հաւատոյ է թուեալ. և թէ չէ լորէ և յիրգւոյ, որպէս վերապոյն նշանակեցաք, առաւելապէս վիճմունց եղեն, քանիցս անզամ ջան եղեւ վասն միարանութեան եկեղեցւոյն յունաց և արեւելեայց, ընդ լատին և արեւմտեան եկեղեցւոյ. Այսը մասին զննութիւն իրբեւ երիս առաջս ունի. և վասն այնք՝ յայսոսիկ երիս զլուխս եղեւ վերածեալ. նախ՝ թէ արդեօք բղխումն Հոգւոյն Սրբոյ ի լորէ և յիրգւոյ, իցէ վարդապետութիւն հաւատոյ. և առ առաջին այս զլուխ՝ հաստատութեամբ տուաւ միշտ պատասխանի, թէ ամենայնիւ անտարակոյս՝ բղխումն Հոգւոյն Սրբոյ ի լորէ և յիրգւոյ, ընդ վարդապե-

տութիւնս հաւատոյ է թուեալ. և թէ չէ իսկապէս ուղղափառ, որ ոչ ընդունիցի, և զաւանեսցի զայս: Երկորդ՝ եղեալ թէ իցէ սա մի ի վարդապետութեանց հաւատոյ, արդեօք արժան էր ի հանգանակ պատարագին՝ յաւելուլ զրառն և յիրդոյ, թէպէտ և ոչ ի նիկիոյ և ոչ ի կոստանդնուպօլսի սիւնհողոսսն զտանիցի, այն զի ի տիեզերական սիւնհողոսն Եփսոսի վճռեցաւ. զի մի՛ ինչ յաւելցի ի հանգանակն նիկիական: «Սահմանազրեաց սուրբ Սիւնհողոսն, զի մի՛ ումեր օրէն իցէ զայլ հաւատ յառաջ բերել կամ զրել, կամ շարազրել, բաց ի սահմանելոյն ի սրբոց հարց, որը ի նիկիայ Հոգւով Սրբով

գումարեցան»։ Եւ այս երկրորդ զլուխ՝ հաստատեցաւ, թէ ոչ միայն օրէն, այլ և յոյժ պատշաճաւոր եղեւ, զայս յարազրութիւն առնել ի հանգանակն նիկիական։ զի ժողովն Եփենոսի արգել միայն զյարազրութիւն հակառակեալս հաւատոյ՝ կամ զանգզուշաւորս, և զի հասարակաց սովորութենէ շեղեալս։ այլ ոչ զողղափառականս, և զայն՝ որովք մասն ինչ հաւատոյ ի հանգանակի անդ լոելեայն պարունակեալ, բացարազոյն յայտնի։ Եւ երրորդ, եղեալ թէ անտարակոյս վարդապետութիւն հաւատոյ ից՝ բղիսում Հոգույն Սրբոյ ի Հօրէ և յՈրդոյ։ և ծանուցեալ ևս՝ թէ էր յեկեղեցւոշ իշխանութիւն յաւելոյ ի հանգանակն զմայնս՝ և յՈրդոյ արգեօց մարթ էր թոյլ տալ արկելեայց և յունաց, զի ի մատուցման պատարագի ասացեն զհանգանակն այնպէս, որպէս յառաջազոյն՝ նախ բան զհերձուածն սովորէին ասել այսինքն, զանց արարեալ զրառիւմ և յՈրդոյ։ Առ այս վերջին զլուխ՝ ոչ միշտ միօրինակ եղեւ առաքելական աթոռոյն վարդապետութիւնն, ֆանզի երրեմն թոյլ ևս արկելեայց և յունաց՝ ասել զգհանգանակն առանց բառիս, և յՈրդոյ։ այսինքն յայնժամ, յորժամ ստուգի յայտ էր, թէ զառաջին երկու զլուխն կամ զմասունս ընդունէին նորա։ և զիտէ՛ զի թէ ոչ թողացուացի նոցա այն, զոր ամենայն կամօր խնդրէին, փակիւ ամեննեկն մուտ լզմալի միարանութեանն։ իսկ երբեմն կամեցաւ ամենայն իրօր, զի զհանգանակն հանդերձ յարադրութեամք, և յՈրդոյ, ասասցեն արկելեայց և յոյնք, այսինքն յորժամ յիրաւի էր կասկածիլ զնոցանէ, թէ վասն այնը ոչ կամին նորա զհանգանակն՝ յարադրութեամքն ասել, զի զհետ երթան մոլորութեան այնց, որը կարծէինն և ասէին, թէ Հոգին Սուրբ ի Հօրէ և յՈրդոյ ոչ բղիսի։ կամ թէ յարադրութիւնն այն և յՈրդոյ, ի հանգանակն, ոչ կարէր լինել յեկեղեցւոյ։ երկու ծայրագոյն բահանայապետց, այսինքն երանելին Գրիգոր տասներորդ, ի ժողովն Լոգոնեան և Եւգինէոս չորրորդ, ի ժո-

ղովն Փլորենտեան, վասն ասացեալ պատճառուաց՝ զառաջին եղանակ վարելոյ կալան ընդ յոյնս, որպէս յայտ է (ի հատ. 7 բաղուածոյ ժողովոց, զոր արարեալ է չարդունոյ. էջ 698. Դ. և ի հատոր 9. նոյնոյ բաղուածոյ. էջ 395. Դ). իսկ զերկրորդ եղանակն՝ վասն պատճառուաց նոյնպէս վերողելոց՝ կալաւ և պահեաց ծայրագոյն բահանայապետն նիկողայոս երրորդ, ի ստուտանել իւրում զՄիքայէլ կայսրն, թէ ոչ մտերմութեամք զնացեր. և ոչ յայնս կացեր, զորս խոստացարն՝ ի լինել միարանութեան, զոր ընդ բահանայապետին Գրիգորի տասներորդի, նախորդին մերոյ կատարեցեր, և հաստատեցեր։ Այսր իրի ապացոյց ի վագիկանեան զիւանէ հանեալ՝ տպեցաւ ի տարեգիրսն Հոբենալդոսի, (ի վերայ ամին Գրիստոսի 1278. յոդ. 7)։ Զնոյն հանապարհ կալան Մարտինոս չորրորդ, և նիկողայոս երրորդ։ Եւ թէպէտ զայսց բահանայապետաց՝ ի վերայ այսց իրաց պատմիչը պէսպէս աւանդեցին, սակայն Փախիմէր, որ յայնմ ժամանակի զկոստանդուուլուսի պատմութիւնն յետագայց յիշատակազրէք (զիրք Զ. գլ. Ժ.Դ.) յայտնի վկայէ, թէ սոքանիորդաց իւրեանց գերիրաւախուութեան ոչ եղեն հետեւող. այլ կամենցան՝ զի յարկելեայց և ի յունաց հանգանակն ասացի հանդերձ յարադրութեամքն, և յՈրդոյ, զի ի մէջ անվեալ երկրայութիւնն զուղղափառ հաւատոյ նոցա, բարձիք. «առ ի առնուլ զստոյց փորձ հաւատոյ և մտացն յունաց, և այսմ բաւական առհաւատչեայ եղիցի (ասէ), եթէ և նոցա իրրե զլատինս ասսացեն զհանգանակն»։ Նոյն բահանայապետն Եւգինէոս, որ ի Փլորենտեան ժողովն շնորհեալ էր արկելեայց, զի առանց բառիս՝ և յՈրդոյ, ասասցեն զհանգանակն. իրրե յետ այնը ընկալաւ զհայս ի միութիւն սուրբ եկեղեցւոյ, պատուէր ետ նոցա, զի յաւելմամք այնը յարադրութեան ասասցեն զհանգանակն, որպէս երեխ ի բաղուածն ժողովոց՝ արարեալ ի Հարդունոյ. (հատ. 9. յէջն 435 թ.) թերևս զի ետես, թէ հայր ոչ հա-

ւասար յունաց՝ այնմ յարազրութեան հաւկառակին։ Նոյնպէս կալիստոս երրորդ, քահանայապետ Հռովմայ, իրոն առաքեաց զիրա Սիմէոն ի կարգէ քարոզաց, զկացուցեալն ըննիշ, ի կրեաէ կզզի, յոր անկեալ էին բազում յոյնը՝ փախուցեալը ի կոստանդնուպոլիսէ, որում երկու ամօց յառաջ տիրեալ էին տաճիկը, հրամայեաց նմա անցուն փոյթ ունել, զի այնք յոյնք ասասցեն զհանգանակն յարազրութեամբն՝ և յիրդոյ որպէս պատմէ Գրիգոր տրապիզոնեցի, (ի թուղթն իւր առ կրետացիս, հատ. Ա. ուղղափառ յունաստանի, առ Ալլատիսոսի. Էջ 537) որ և հաստատի յերարտէ. (հատ. Ա. պատմչաց կարգին սրբոյն Դոմինիկոսի. յէջն 762) թէրևս զի կասկածէր քահանայապետն, թէ գոյցէ այնք յոյնը, իրը զի ի կոստանդնուպոլիսէ եկեալ էին, յայնմ վարդապետութեան հաւատոյ ոչ յոյժ հաստատուն իցեն։ Յերկուս ձևս դաւանութեան հաւատոյ, զորս վերագոյն իսկ յիշատակեցաք, զորոց ըզմինն Գրիգոր երեցտասաներորդ վասն յունաց՝ և զմիւնն Արքանու ութերորդ վասն արեւելայց՝ սահմանեցին, ոչ ինչ այլ պարունակի, բայց միայն որ ի Փլուրենտեան ժողովն կարգեցաւ Յերկուս սահմանադրութիւնս, որոց մինն է կղեմայ ութերորդի. որ է, Յ4 երրորդն, (հնոյ հոռվմէական կոնդակազրի. հատ. Յ. յօդ. 6) և միւն մեր, որոյ սկիզբն է, բեպէու և հովուական. (յօդ. Ա. կոնդակազրիս մերոյ. հատ. Ա.) երկութին իսկ արարեալ վասն լատին եպիսկոպոսաց, յորոց ի թէմս բնակին յոյնք կամ ազուան՝ զյունաց ծէսս պահօղը, միայն թէ իսուս տովանեսցին սոքա՝ թէ Հոգին Սուրբ բղիկի ի Զօրէ և յիրդոյ, և ծանիցեն՝ թէ ունէր եկեղեցի զիշխանութիւն յաւելլոյ ի հանգանակն զրառա՝ և յիրդոյ, ոչ հրամայի նոցա սաել զհանգանակն այնուիկ յարազրութեամբ. եթէ ոչ՝ գոյցէ ընդ զանց առնելն զայնու, զայթակլութիւն զհես զայցէ, կամ ի տեղուղ ուրեց մասնաւոր սովորութիւն արդէն լեալ իցէ՝ սասելոյ զհանգանակն հանդերձ յարազրութեամբն,

և յիրդոյ և կամ հարկաւոր համարեսցի, սաել նոցա զհանգանակն այնուիկ յարազրութեամբ, առ ի ընծայիլ զաներկրայ ցոյց՝ ուղիղ հաւատոյ նոցա, իւ կարի իսկ բաջ՝ ոչ միայն հարց ժողովոյն Զամոսկիայ, (վերնագիր. Ա. յաղազու ուղղափառ հաւատոյ), այլ և հարց լիրանանեան ժողովոյն, (ման Ա. ի նմին վերնագրի. համար 12) ի բառնալ զամենայն խիզ՝ խոհեմարար սահմանեցին, զի ամենայն քահանայց՝ օրինաց նոցին հապաւակը, զհանգանակն ըստ սովորութեան հոռվմէական եկեղեցւոյ, վարեսցեն հանդերձ մասնկամրս, և յիրդոյ:

ԱԱ. Յայսցանէ, որը ցայսվայր ասացան, լիով եղրակացուցանի, թէ աթոռն առացելական յայսմ իրողութեան երեխն ի մասնաւոր ինչ զպարագայից, և հայեցեալ ընդ բնաւորութիւն ազգի իրիք, հաւատեալ իցէ, զի որոշ եղանակ ինչ վարեսցի, զոր սակայն այլոց՝ փասն այլ և այլ պարագայից, և պէսպէս բնաւորութեան տեղեաց և ժողովրդոց, ոչ իւիք իրօց թոյլ տուեալ է վարել։ Յակս որոյ կամեցեալ զյանձն առեալ աշխատավորինս ի գլուխ հանել, ոչ այլ ինչ մեայ՝ բայց ևեթ ցուցանել, թէ երրեմն նոյն աթոռն առացելական տեսեալ զժողովուրդ ինչ արեւելայց և յունաց, թէ պինդ կայ ի վարել զծէս ինչ լատինական, զայնը ծիսի կիրառութիւն թոյլ ետ նմա ներողապէս. մանաւանդ եթէ զայնպիսի ծէսս վարելոյն սովորութիւն, ի վաղնջուց ժամանակաց էր յաճախեալ, և եպիսկոպոս ոչ միայն չէին երբէք այնմ հակառակեալ, այլ և լուկեայն կամ յայտնի հաւատեալ։ Այլ ցանզի զայսմանէ յայտնի օրինակը արդէն վերագոյն ի մէջ մատուցան, ի խօսիլ մեր զայնմ դասէ արեւելայց և յունաց, որը զծէսս իւրեանց մեծագոյն մասամբ պահեալ, բայց և զատինացւոցն իրք զարեւելայց ծէսս՝ ի յարգի ունելով, ինչ ինչ ի ծիսից մերոց յիւրեանս ընկալան վասն այն յաւելորդ կրկնարանութիւնէ խորշիցուոր. յայս վայր վերաբերեալ, զոր ինչ վերագոյն ի զրի աստ

լիով առաջի արարագ: Երկուս միայն օրինակս ի մարոնեաց առեալ՝ յարեացուք յայնս, զորս յառաջն ի մէջ մատուցաց: Յոմանց դարուց հետէ մարոնիք՝ զբահանայապետական և զբահանայական զգեստս վարեն ըստ ձևոյն, զոր լատին ծէսն սահմանաղբէ: որպէս ի ստէպ յիշատուակեալ ժողով լիբանանեան, որ եղկ յամին 1736 ընթերցեալ լինի, (զլ. 12. յաղագս խորհըրդոյ հաղորդութեան. համար 7): Զի քահանայապետն մեծ ինովկինտիոս երրորդ ի թուղթն յղեալ առ Երեմիաս պատրիարք, յամին 1215, որոյ սկիզբն է. քանզի աստուածային իմաստութեանն բարուրին յորդորեաց զնոսա նմանիլ լատինացւոց եկեղեցւոյն ի քահանայապետական զարզս: Վասն որոյ իսկ թէ՛ նոյն քահանայապետն, և թէ՛ յաջորդք նորա յղեցին առ նոսա զսրբազն զգեստս՝ զրսկին և զմազզմայս ի պարզե: որպէս պատմէ Պետրոս պատրիարք յերկուս թուղթս յղեալս առ Ղեռն տասներորդ, որը բերին ի հատորն 14 քաղուածոյ ժողովոց՝ զոր արարեալն է Լարրեայ (յէջն 346 և յորս զկնի), իսկ ի մօտ ժամանակս ի լիբանանեան ժողովի անդ, (զլ. 13) միարան կամօց, և մերոյ հաւանութեան ի վերայ եկաւորութեամբ, նոյն մարոնիք ի մասին նախասրբացուցելոց պատարազի՝ զատինականն ծէս յիւրեանս ընկալան. զայն պատարագ աւագ ուրբաթի միայն պահելով. թողեալ վասն արդար՝ և ծանր պատճառաց զվարդապետութիւնն յունաց, որը յաւուրս քառամնորդական պահոց, միայն զնախասրբացուցելոց պատարագ մատուցանեն. բաց ի շարաթուց և ի կիւրակէց, և բաց ի տօնէ աւետեաց սուրբ կուսին, եթէ ի քառամնորդաց պահի զիւպեսցի, (ըստ սահմանադրելոյ տրուլեան կանոնին 52): Զի յայսուփկ աւուրս քահանայն զիացն սրբացուցեալ յայնչափ մատունս բաժանէ, որչափ են հետագայ աւուրբ, յորս նախասրբացուցելոց պատարագ մատչի: յորս իսկ ճաշակէ զիացն հաղորդութեան՝ զոր յառաջն սրբացոյց, պահեալ ի սրբատիք զայլ սրբացուցեալ

մասունս, զի ի յաջորդ աւուրս՝ յորս ըզպատարագ նախասրբացուցելոց մատուցանել ունի, յայնց ճաշակեացէ. և ընթերակայիցն ևս խնդրողաց՝ մատակարարեացէ. որպէս ճոխագոյն յիշատակէ Ղեռն Ալլատիոս ի նախերգանսն առ Գարբիէլ Նավդէու՝ (Ցաղազս պատարազի նախասրբացուցելոց. յէջն 1581, համար 1):

Ա. Այս մերոյ թղթոյ յայսմ վայրի՝ թերեւս ումեց պատշաճ թուղթի՝ վախճան առնել, իր զի ի սմա եղկ արդէն պատասխանատուութիւն առ խնդիրսն ի քարայեան միսոնար քահանայէ առաջարկեալս, այսինքն, թէ ոյինէ և նորոգելի և զի ցուցան ևս, հաստատուն կանոնը՝ զորոց զնետ երթալ պարտին միսոնարը, որը զարևելեայս ի հերձուածոյ և ի մուլորութեանց, ի միութիւն և ի սուրբ ուղղափառ հաւատ դարձուցանել ջանան, զի ոչ ըստ իրաւանց կանոնաց և առաջելական սահմանադրութեանց զնայ, որ ի զարձուցանելն զարևելեայս, զծէսն ևս զարևելեան, և զյունական, ըստ այնց՝ որը յառաջելական աթոռոյ տարեալ լինին և թողացուցանին, ձկտի ի միջոյ քառնալ. կամ գոն գործէ, զի որը գառնանն ըզցայնվայր պահեալ ծէսն թողցեն, և զլատինականաւ զիրկս արկանիցեն: Սակայն ամենայնիւ, յառաջ քան զվախճան առնել թղթոյս, կարի վայելուչ է խօսիլ և զնիւթոց ինչ, որը հպատորքն են խնդրոց ի միսոնարէ անտի առաջարկելոց. առ որս տուաւ պատասխանի, թէ ոյինէ և նորոգելի:

Հ. Եւ արդ՝ եթէ ի Բարեայ քաղաքի գոտանին ուղղափառը արևելեայ ծիսովց, հայք կամ ասորիք, որը չունելով զսեպհական եկեղեցի, ժողովին յեկեղեցի լատին միսոնարաց, ուր քահանայց արևելեայ ծիսովց զվատարագս մատուցանեն և զայլ արարողութիւնս ըստ ծիսի իւրեանց կատարեն. իսկ աշխարհականց յանդիման լինին մատուցման պատարազի, և զնորհւարդսն ընդունին, ոչինչ զժուարին է իմացուցանել, թէ ոչ ինչ է նորոգելի, որպէս բազմից զրեցաւ. և թէ որ

ինչ էրն յառաջ, զնոյն և յայսմէետէ պարտ է պահել. թոյլ տալով այնց բահանայից և աշխարհականաց, զի ի լատին եկեղեցւոց հանապազորդեսցն զնոյն գործել, զոր մինչև ցայսօր գործէին: Զի թէպէտ այս սահման կայ ի կանոնական իրաւանց, թէ զարեկելեան և զյունական ծէսս չէ պարտ խանճել ընդ լատինականին, որպէս է տեսանել ի վճռագրի կելեստինոսի երրորդի, առ Գոնզաղէսի, (գլ. Քանզի ըստ յաղաց ժամանակաց ձեռնազորութեանց), և ի վճռագրի Ենոպէկենտինի երրորդի. (գլ. Ալշափ. յաղաց սովորութեան. զլ. Վասն զի. յաղաց Պաշտօնի զատաւորաց տեղեաց), և ի վճռագրի Բնորիսոսի երրորդի. (գլ. զթուղթս. յաղաց մատուցման պատարագաց), բայց ոչինչ իրաւամբ հաստատիլ կարէ, թէ խանոնութիւն ծիսի՞ առաքելական իմն սահմանազորութեամբ արգելեալ՝ ի մէջ անկանիցի, յայսմանէ սեթ, եթէ հայ որ կամ մարոնեան, կամ յոյն, ըստ ծիսի իրում յեկեղեցւոց լատինացւոց պատարագ մատուցէ, կամ զայլ արարողութիւնս ընդ համաձէս ժողովրեան վարեսցէ. կամ անդրադարձեալ՝ լատին որ յեկեղեցւոց արեկեայց զնոյն անիցէ. մանաւանդ յորժամ օրինաւոր ինչ պատճառ կայցէ, որպէս անտարակոյս երկի լինիլ յայզմ արարման. որովհետև այնք արեկեայր ի Բասրա քաղաքի չունին զաեպհական եկեղեցի. այնպէս՝ զի թէ ոչ զոյր նոցա մուտ ի լատինացւոց եկեղեցի, յայտնի իսկ չըմեայր տեղի՝ յոր զպատարագս մատուցեն, և ընդ համաձէս ժողովրդեան, զայլ պաշտամունս իրեանց կատարեսցն, առ ունելոյ և տածելոյ զնոսա ի սուրբ միաբանութեան:

Լի. Ալդարն արգելեալ խառնութիւն ծիսի լինէր, եթէ լատին որ խմբուն հասցիւ սրբացուցանէր. և զհաղորդութիւնն խմբուն հացիւ սրբացուցեալ՝ լատինացւոց մատակարարէր. և զնոյն է ասելի, եթէ այնք արեկեանք, որք ոչ երէք զսովորութիւն բաղարջի ընկալան, բաղարջի մատուցանէին զպատարագ. և ազգի

իւրեանց զսովը հաղորդութիւնն բաղարջի բաշխէին, վասն որոյ զգուշութեամբ փոյթ ունել պարտ է առաջնորդաց՝ ևս լատինացւոց, որք ունին ընդ հպատակութեամբ զիտալացի-յոյնս. (զի լատինը միշտ բաղարջիւ, իսկ յոյնը ուսուրեց զսեպհաւկան ժողովրդապհութիւն ունին, խմբուն հացիւ հաղորդեսցն). որպէս հրամայի ի սահմանադրութեան մերում. (րեպիտ և ռովուական. 57. յօդ. 6. համար 14. կոնդակագրիս մերոյ հատ. Ա), Նոյնպէս արգելեալ խառնութիւն ծիսի լինէր, եթէ լատին բահանայ որ երբեմն ըստ լատին, և երբեմն ըստ յոյն ծիսի. կամ յոյն քահանայ որ երբեմն յոյն և երբեմն լատին մատուցանէր զպատարագ: Զի այս արգելեալ լինի ի սահմանադրութեան սրբոյն Պիտոսի հինգերորդի, որոյ սկիզբն է, տեսչութեամբ (որ և է 21 երրորդն. հատ. 4. մասն 2. նորոյ կոնդակագրի, տաեցելոյ ի Հոռով) ուր ամենայն իշխանութիւնը, որք յանցեալ ժամանակս ումանց երիցանց վասն այսր շնորհցան, իսպան նահանջին: Ծնդ այսմ սահմանադրութեան սրբոյն Պիտոսի հինգերորդի, միարանի և մերս նախայիշատակեալ սահմանադրութիւն (յօդ. 7. համար 10): Ապա եթէ երիցանց ընկերութեանն թիսուի, որք վերակացուեն են դպրոցաց արեկեան ազանց՝ կառուցելոց ի Հոռով. և որք զասացելոյ ընկերութեան զկանունադրութիւնն ընկալեալ՝ ի յոյն ծիսէ ի լատին ծէս փոխեցան, թողացուցաւ, որպէս վերագրյն նշանակեցար, զի մատուցեն երբեմն զպատարագ արեկեան և յոյն ծիսով. այս վասն այնորիկ եղե, որպէս և նախ ծանուցաց, զի ուսանողըն որք զյունաց և զիմարոնեաց ծէսս վարեկ պարտարին, զպատարագն այնուիկ ծիսի լատինաց մատուցանելու մատակարարէր կատարեսցն, յամարթ զայն յօրինակ բերել, վասն զնման ներմունս ընդունելոյ, որ այնպէս ծշմա-

թիւ է, մինչ զի թէպէտ կարդինալ լէու-  
պոլոս կողոնիոյ, կղեմայ մետասաներոր-  
դի, նախորդի մերոյ եցոյ՝ թէ յոյժ օ-  
գուտ լինէր ուղղափառ կրօնի, եթէ թոյլ  
տուեալ լինէր լատին միտոնարաց ի Հոն-  
գարիա՝ յոյն ծիսի պատարագել, բանիցս  
անգամ թուիցի պահանջել զայն հարկին,  
թողեալ նոցա զազատութիւն անդրէն ի  
լատին ծէս զառնալոյ: Բայց քահանայա-  
պետին զմտաւ ածեալ՝ թէ պարտ է իւրա-  
քանչիւր ումեց ըստ կանոնական օրինա-  
դրութեանց՝ յիւրում ծիսի մնալ. և թէ  
չէ օրէն՝ քահանայի երբեմն լատին և եր-  
բեմն յոյն ծիսի պատարագել. զհրամանն՝  
զոր խնդրէր կարդինալն, ոչ յանձն էառ  
տալ. որպէս յայտ է ի թթիոյ նորա՝  
յղելոյ ի ձեւ նամակի առ նոյն կարդինալ  
ի 9 մայիսի յամին 1705 (որ և կայ ի  
Ա. հատոր. ընտրելագոյն թղթոց և նա-  
մակաց նոյն քահանայապետին, տպագրե-  
լոց յէջն 205):

Լե. Այսորիկ և այլ բազում օրինակք,  
զորս զիւրին էր բարդել, վերաբերին առ  
խանութիւն ծիսի, որ արգելեալն է յե-  
կեղեցւոյ օրինաց: Բայց որպէս արդ ա-  
սացաց, ոչ երբէց արգելեալ խանութիւն  
ծիսի կարէ անուանիլ, եթէ վասն օրինա-  
ւոր ինչ պատճառի՝ քահանայ ոք արեն-  
եան ծիսի, յառաքելական աթոռոյն հա-  
ւանեցելոյ՝ ընկալեալ լիցի ի լատինացւոց  
եկեղեցի. զի անդ պատարագ մատուցէ,  
և զայլ պաշտամունս կատարեցէ, և ըզ-  
խորհուրդս ժողովրդեան ազգին իւրոյ մա-  
տակարարեցէ: Զայս յայտնի տեսանեսք  
լինիլ ի Հոռվմ, ուր քահանայց Հայոց,  
և Խփտեաց, Ա'նլըքեանց և Յունաց՝ հա-  
մարձակ մուտ ունին ի տաճարս մեր ի  
պատարագել, զի բարեպաշտութեան նոցա  
իղձ կատարեցի. թէպէտ և ունին իւ-  
րեանց մասնաւոր եկեղեցիս, յորս կա-  
րէին պատարագել. միայն թէ զսրա-  
զան զգեստ՝ և զայլ որինչ պիտոյն  
իցէ առ մատուցումն պատարագի, ըստ  
ծիսի՝ իւրեանց՝ ընդ իւրեանս ունիցին.  
միանգամայն և զսպասաւոր յիւրեանց ազ-  
գէ, որ ի պատարագել նոցա սպասաւո-

րեսցէ: Եւ ի պահապանաց և ի լուսա-  
բարաց պատշաճաւոր զգուշութիւն լինի-  
ցի. զի մի՛ առ նորութեան իրացն՝ աղ-  
մուկ շփոթի ի շրջակայս ծագեսցի. որ-  
պէս լիով զնեալ կայ ի հրամանագրի, որ  
վասն արևելեան եկեղեցականաց՝ և աշ-  
խարհականաց ի Հոռվմ եղելոց, ի 13  
փետրուարի, յամին 1743 մերով հրամա-  
նաւ հրատարակեցաւ, ի ձեռն յարգելի  
եղրօր մերոյ Յովհաննու Անտոնի, որ յայն-  
ժամ սրբոցն Սեղրեստրոսի և Մարտինոսի,  
ի լերինս, աւագէրէց անուանեալ. և այժմ  
եպիսկոպոս Ծովողայ, սրբոյ Հոռվմէական  
եկեղեցւոյ կարդինար՝ Գուաղացնի յոր-  
ջորջեալ, և մեր ի քաղաքիս և ի մեր-  
ձաւոր սահմանս նորա ընդհանուր աթո-  
ռակալ: Բայց առ այս մեր բան բազում  
նպաստ մատուցանէ, զոր ինչ նշանակել  
ունիմը յառաջակայդ: Զհասարակածաւ  
չորեցտասաներորդ դարուն, որպէս և յայտ  
է, Մահմէտ երկրորդ, զկոստանդուլոյի  
բռնութեամբ պաշարեալ էառ. և ոմանը  
ի յունաց, որք ի մոլորութեանց հերձուա-  
ծողաց զատուցեալ, զհաղորդութիւն ընդ  
լատինացւոյ եկեղեցւոյն պահեալ էին,  
անկեալ ի վիճատիկ՝ և անդ մնացին: Յոր  
քաղաք իրու եհաս խիդրոս կարգինալ  
ազգաւ յոյն, առաջի արար ծերակուտին  
զՀոռվմայ քահանայապետին զաղերս. զի  
արանցն այնոցիկ ի յոյն ծէս եղելոց  
տաճար ինչ սահմանեսցի, ի կատարել  
նոցա անդր զիւրեանց պաշտամունս: Ի  
գութ խանդաղատեալ ծերակուտին շնոր-  
հեաց ժողովրդեանն փախստէի զեկեղեցին  
սրբոյն Վլասայ, ուր ընդ միջոցս բազում  
ամաց յոյնց ի մասնաւոր ինչ խորանի  
այնր եկեղեցւոյ զատուածային պաշտա-  
մունս յոյն ծիսով կատարէին. իսկ յայլ  
խորանս լատինը լատին ծիսով. որպէս  
վկայէ Փլամինոս կուռնելիոս պատմիչ ա-  
նուանի, ի 14 զեկադ, զենետիկեան ե-  
կեղեցեաց. յէջն 359: «Եւ այսպէս (ասէ)  
երկոցունց ծիսից պաշտամունց զամս ինչ  
ի միում եկեղեցւոյ, թէպէտ յայլ և այլ  
խորանս կատարէին», որ և տեսաց ցայն  
վայր, մինչեւ ի բազմանալ յունաց, այնմ

և կեղեցւոյ սրբոյն վլասայ, որ լատինացւոց և յունաց էր հասարակ, այլ տաճար փոխանակեցաւ, յունաց սեպհական:

1.9. Այս բանց են վասն յունաց, որոց տուեալ միել մուտ յեկեղեցին լատինացւոց ի պատարագել: Սակայն զի առաւել ևս յայտնագոյն ծանիցի թէ յայսմանէ ոչ լինի ինչ խառնութեան ծիսից տարագրեալ յեկեղեցւոյ օրինացն, ոչ անմարթ թուի խօսիլ և զլատինացւոց, որք ի մատուցանել զպատարագ և ի կատարել զաստուածային պաշտամունս, յարդար պատճառաց ինչ ընկալեալ լինին յեկեղեցիս յունաց: Որ ոչ միայն զառաջեղեալ զրութիւնս հաստատէ, այլ և բազումն նպաստէ առ ապացուցանել, թէ քանի՛ հարկաւոր իցէ ի մէջ ուղղափառաց՝ թէպէտ և յայլ և այլ ծէսս իցեն, առ միմեանս միակամութիւն, և քաղցրութիւն: Ի լիթվանեան թուսաստան ուղղափառ ուուրը՝ զոր միարանեալս կոչեն, բազումն ունին եկեղեցիս, իսկ լատինը սակաւու, և այնք ևս կարի տարակացը ի թաղից լատինացւոց՝ ի ուուսաց միջի ընակելոց: Լատինը երբեմն ընկերկապ մնային առանց լատինական պատարագի. զի ի տուրեառու իւրեանց զրաղեալը, ոչ կարէին զայնչափ երկար ճանապարհ հատանել, զի ի լատինացւոց եկեղեցիս գայցեն: Եւ ոչ լատին երիցունց դիւրաւ կարէին յայն սակաւ եկեղեցիս լատինացւոց, որք ի լիթվանեան թուսաստանի էին, զնալ ի պատարագել, վասն զի եկեղեցին իսկ ի ընակութենէ նոցա հարուստ միջոցաւ բացաձիգ էին: Ապա զի մի՛ լատինը ի պատարագաց լատին ծիսիւ մասուցելոց զըրկեսցին իսպառ, այս մի ինչ մնայր, զի լատին քանանայք՝ առ լատինացւոց զիւրութիւն, զլատինական պատարագս ի ուուսաց եկեղեցիս մատուցեն: Սակայն և յայսմ այս ինչ գեռւարութիւն ընդպառաջ լինէր. զի սեղանը յունաց չունին զսուրը վէմ. զի պատարագեն նոքա ի վերայ փոքր սփոռաց, որք են կտաւել ինչ յեպիսկոպոսէ օրնենեալը. որոց յանկիւնս հաստատեալ են նշխարը սրբոց, վասն որոյ լա-

տին քահանայք զսուրը վէմ հարկէին ընդ իւրեանս ըրջեցուցանել, ոչ փոքր աշխատութեամբ, և զգուշութեամբ, զի մի բեկցի ի ճանապարհին: Այս ամենայն գեռւարութեանց ի վախճանի՛ օգնականութեամբ Տեառն գտան: Գտանզի հաւանութեամբ և նոցին իսկ ուուսաց՝ չնորդեցաւ լատին երիցանց, մատուցանել զպատարագ լատին ծիսով ի ուուսաց եկեղեցիս, և ի վերայ փոքր սփոռաց նոցա: և այս թուեցաւ վայելչական: զի և ուուսաց քահանայք եկեալ երբեմն ի լատինացւոց եկեղեցիս՝ մատուցանել անդ պատարագ, ի վերայ մերոց սուրբ վիմաց զպատարագէին: Այս ամենայն յայտնի լինի ի սահմանադրութեանէ մերմէ, (որոյ սկիզբն է հեկերյ ի վերայ մեր. որ և է քառասներորդ երրորդ կոնդակագրիս մերոյ, հատոր երրորդ):

Ա. Նոյնակս ապացոյց է մերոց բանից այն զոր ասել ունիմը յառաջիկայդ: Վիճեն ընդ միմեանս զիտնաւորը, թէ արդեօց ի հոյակապ տաճարս արևմտեան եկեղեցւոց մի՞ միայն սեղան կայր ըստ հին աւանդութեան, թէ բազում: Զառաջինն հաստատէ Արեղենստրատու. (մասն Ա. գործոց արևելեան եկեղեցւոյ զլ. 2 յաղազս առանձնական պատարագի լատինական եկեղեցւոյ). այս ընկդէմ այսմ կարդինալն թունա (ի վերայ խորհրդատեսրի իրաց. զիքը 1. զլ. 14. համար 3) ապաստանեալ ի վկայութիւնն Փատղիրիեայ (գլ. Դ.) ցուցանէ թէ բազում սեղանց էին ի հոռվիչական հոյակապ տաճարի սրբոյն Պետրոսի: Սակայն եթէ զտաճարաց և զույգակապաց արևելեայց և յունաց լինիցի բանն, յայտնի երեխ, թէ մի միայն սեղան կայր ի նոսա. և արդ իսկ իրը ի բազումս կայ. որպէս հաւաքի ի նկարագրութիւնէ այսպիսի տաճարաց, զոր ի մէջ բերեն Դիւ կանգիռու (ի վերայ ըրիստոնէ-ութեան կոստանդնուպոլսի), Բեկվեգիռու ի ծանուցմուն (առ պանդեկտայ կանոնաց) և Գովարիու, (ի վերայ մաշտոցի յունաց): Բայց քանզի ի տաճարի սրբոյն Աթանասի՛ եղեկոյ ի Հոռվիմ ի ձեսս յունաց,

բազում սեղանք կան, Ղեկոն Ալլատիոս ի թուղթն առ Յովհաննէս Մովքրինոս զըրբեալ, (յաղագս տաճարաց նորոց յունաց, Համար 2) ոչ երկմտեաց ասել, թէ յայնմ եկեղեցւոջ ոչինչ ըստ ձեռյ յունաց զըտանի, բաց ի բեմէ, այսինցն յանջրպետէ, որ զաւագ սեղանն յայլոց մասանց եկեղեցւոյ որդէք: Ալրդ յայն սեղան, յորում քահանայն մատոյց զպատարագ, ոչ կարէ այլ քահանայ ի նմին աւուր միւս սանգամ պատարագ մատուցանել: Զայսմանէ վարդապետութենէ յունաց՝ խօսին Դիրնեսիոս Բարսաղիքոս Յակովրեան՝ Ամերոյ եպիսկոպոս, (ի մեկնութեան պատարագի) և Լիւրակոս Պատրիարք Յակովրեանց, առ Գրիգորի Բարհերքոսի, որ ի յակովրեանց անտի, (յիւրում ճանապարհագրութեան) զորս յիշատակէ Ալսեման (ի հատ. 2 զիւանազրի արևելեայց. յէջն 184 և ի հատ. Գ. մասն 1. յէջն 248): Զգարդապետութենէ զայսմանէ կարդինալ Բոնա, (ի վերոգրեալ գլ. 14. Համար 3) այսպէս եթող զրեալ. «Ճմի միայն սեղան ունին յեկեղեցիս իւրեանց. և ոչ օրինաւոր համարին ընդ ցանգով նոյնոյ տաճարի, ի նմին աւուր երկրորդել զպատարագ»: Եւթիմիոս Տիւրոսի և Սիդոնի արքեպիսկոպոս, և Կիւրեղ Ալտիորայ պատրիարք յունաց ի քահանայապետութեան կղեմայ մետասաներորդի, Բինեղիկոսոսի երեքտասաներորդի և կղեմայ երկուտասաներորդի, բազում անգամ հարցին՝ թէ պա՞րտ իցէ նոցա թողուլ զզօրացեալ զայս վարդապետութիւն, որ արզելու, զի մի երկրորդ պատարագ ի նմին աւուր և ի նոյն սեղան մատուսցի Բայց միշտ տուալ նոցա պատասխանի, թէ ոչինչ է նորուգելի այլ հին ծէսն ամեննէն է պահելի: Այլ քանզի տարածեալ էր մոլորութիւն ի ուամիկս, թէ վասն այն ոչ մատուցանի երկրորդ պատարագ ի նմին աւուր, և ի նոյն սեղան, յորում այլ քահանայ պատարագեաց, զի թէ այլ քահանայ յետ նորա պատարագեսցէ, և զնոյն հանջերձս սրբութեան՝ զոր զգեցեալ էր առաջնոյն զգեցցի, լուծանէ զծոմն. վասն այնորիկ ի

մերում հանրական թղթի զրեցելում առ Անտիոքայ պատրիարքն Մելքեան յունաց, և առ ուղղափառ եպիսկոպոսունս հպատակեալս նմին, հրամայեցաց նոցա, զի ամենայն ջանիւ փոյթ կալցին զմոլորութիւնն զայն բառնալ ի ժողովրդնէն. սակայն անիախտ պահեալ զվարդապետութիւնն, որով ի սեղանն, ուր քահանայի ոք պատարագեաց՝ այլում քահանայի ի նմին աւուր պատարագ մատուցանել՝ արգելանի. որպէս երեխ ի սահմանադրութեան մերում, որոյ սկիզբն է Զյանձնեալն (87. Կոնդակագրիս մերոյ. հատ. Ա):

Ա. Եւ վերջապէս, կանիւաւ հասարակ ծէս եղեւ արեւմտեան և արեկելեան եկեղեցւոյ. զի երիցունց ի միասին ընդ եպիսկոպոսի մատուցանէին զպատարագ: Զայսր իրի զցոյցս հաւաքեաց Քրիստոս լուսու (ի յաւելուածն ի վերայ Քաղկեդոննեան ժողովոյն. հատոր Ա. առ ընդհանրական և զաւառական ժողովս. առաջնոյ տպագրութեան, յէջն 994). ի մեկնելն զայսոսիկ բանս Բասսիանոսի, «Ընդ իս պատարագս մատուցանէր. և ընդ իս հաղորդէր»: Եւ Գէորգ (ի հատ. 2. քահանայապետական խորհրդատեսրի. յէջն 1. և յորս զկնի. և ի հատ. 3. յէջն Ա. և յորս զկնի): Ծէսն ի միասին պատարագելոյ այժմ յարեւմտեան եկեղեցւոջ խափանեցաւ. բաց յայնմանէ, զոր ի ձեռնադրութեան քահանայից կատարէ եպիսկոպոսն. և յօրհնութեան եպիսկոպոսաց, եպիսկոպոսն ընդ այլ երկուս ընթերակայ եպիսկոպոսունս: Բայց յարեկելեան եկեղեցւոջ տեեաց և տեէ արդ ևս՝ յաճախ սովորութիւն պատարագելոյ երիցանց ընդ եպիսկոպոսին, կամ ընդ այլում քահանայի, որ զգլիաւոր մատուցողի ցուցանէ զանձնն. և այս սովորութիւն վերաբերի ի սահմանադրութիւնս՝ անուանեալս առաքելական. (զիրք 8) և առ ութերորդն ի կանոնաց՝ որք ասին, առաքելոց: Ալրդ ուր ուրեք կայ այս սովորութիւն ի մէջ յունաց և արեկելեայց, ոչ միայն հաւառնեալ լինի, այլ և հրամայի պահել. որպէս յայտ է ի վերոգրեալ սահմանադրութենէ անտի մերմէ. (Զյանձնեալն յօդ. 9):

լթ. ի յունական և յարելեան ծիսէ աստի, զոր ցայսվայր յիշատակեցաք, ումանց առիթ առին երկրայելոյ, թէ արդեօք առանձնական պատարագը որբ ի միոջէ քահանայէ մատուցանին, ի յարելեան և ի յունաց եկեղեցւոշ ունիցին գտեղի. որովհետև ի տաճար յունաց՝ որպէս ասացաք, մի միայն սեղան կայ, և մի միայն ի սեղանի անդ պատարագ մատչի. և քահանայցն ընդ եպիսկոպոսին ի միասին մատուցանեն, կամ ընդ քահանայի՝ որ գաւաք երիցու ունի գտեղի: Զանացան այն՝ լուտերեանը զիսոստովանութիւնն զօդուստեան, յորում առանձնական պատարացաք բառնին, առ յերեմիա պատրիարք կոստանդնուպոլիսի յդել. և զնա յընդունելութիւն նորին հրապուրել. Բայց քանզի առանձնական պատարագի սովորութիւնն և վարդապետութիւնն յարելեան եկեղեցւոշ՝ առեալ լինին և ջատազովի (ի ՅԱ երորդ կանոնէ) տրուղեան ժողովոյն, և ի ծանուցմանց, զորս ի վերայ այնը շարադրեաց թէոդորոս Բաղամովի. վասն այնորիկ և ծէս ստէպ պատարագելոյ քահանայից ընդ եպիսկոպոսին, և միանգամայն առանձնական պատարագաց սովորութիւն՝ անխախտ մնացին յարելեան եկեղեցւոչ: Վասն այսորիկ ի գերե ելին ջանց լուտերեանց, որոց տուաւ պատասխանի, թէ դաստապարտեն այն՝ արելեայը իբրև զարկմտեանսն զթիր սովորութիւն այնց, որը ի զօշաբառութիւնէ ողարմութեան միին ի սեղան. այլ ոչ զայնց՝ որք վայելչական երկիւղածութեամբ, և կրօնանիրութեամբ, առանձինն պատարագեն. զի մատուցեն Աստուծոյ պատարագ ընդունելի: Այս ամենայն յայտ է (ի գործոց արելեան եկեղեցւոյ ընդէմ լուտերեանց). զոր արարեալ է Աթենեատրատայ. (Չ. 1. յաղագս առանձնական պատարագաց յեկեղեցւոշ յունաց, մօտ ի վերջն): Եւ ի դիւրութիւն քահանայից՝ որբ զառանձնական պատարագս մատուցանել կամէին, պահելով միշտ զովորութիւնն՝ առ մի սեղան մի միայն պատարագ մատուցանելոյ յաւուրն, սկսան

սահմանել յոյնք ումբորին, զորոց խօսի Ղեռն Ալլատինու, (ի վերոյիշատակեալ թուղթն՝ առ Յովհաննէս Մովքինու): Իսկ ուրուրներ ոչ այլ ինչ են, բայց ազօթատեղիք ինչ կիցք ընդ եկեղեցւոյն, յորս կանգնեալ կայ սեղան, ուր մատուցանեն քահանայց զպատարագ, զոր ոչն կարէին մատուցանել յեկեղեցւոշ, յայն սակս՝ զի ի սեղանն կանգնեալ ի նմա, այլ բահանայ արդէն պատարագեաց:

Խ. Իսկ ոմանք յայսմ վարդապետութենէ արելեայց և յունաց՝ յիրաւի համացան միթաւլ, մի՛ զուցէ լատին քահանայց ի մատուցանելոյ զպատարագս ի յունաց եկեղեցիս՝ իսպատ արտաքսեցին, յայն սակս՝ զի որպէս վերագոյն ասացաք, մի միայն սեղան կայ ի նոսա. որ ի նմին աւուր մի միայն քահանայ կարէ պատարագել. և այն զի լատին երիցունք ոչ կարէին պատարագել յոմբորնս իբր զի վասն յունաց միայն էին կառուցեալ: Սակայն առ բառնալոյ զայս կասկած, ի յունաց եկեղեցիս զայսու ժամանակօք իբր ի բազում կանգնեալ երեկի երկրորդ սեղան, վասն մատուցանելոյ անդ լատին քահանայից զաստուածային պատարագն է յերիս ձեւ տաճարաց յունաց նկարեաց Գովարիոս, (ի վերայ մաշտոցի յունաց). որոց երրորդն ունի զերկրորդ սեղան՝ կառուցեալ վասն լատին երիցանց, որպէս նոյն ինըն Գովարիոս, (ի նմին տեղուջ), յիշատակէ. և Աթենեատրատոս, (ի վերայիշատակեալ վայրի, յէջն 887) հաստատէ: Յեկեղեցիս ազգին Մարոնեաց և Յունաց՝ եղեալս ի Հռովմ, բաց յաւագ սեղանոյ՝ կան և այլ սեղանք, յորս լատին քահանայց պատարագեն. և ի մերում սահմանազրութեան, բէ զկո նովառական (Ծ. յօդ. 6. համար. 8 և 9 կրնդակագիրս մերոյ. հաստոր 1) որով իստացից յունաց ապահով զպափար աւանդի վարելոյ, արգելեալ լինին լատին քահանայց ի տաճար յունաց՝ յաւագ սեղանի պատարագել, եթէ ոչ ամենայն իրօք հարկն պահանջեսցէ զայն. և յոյն ժողովրդապետին հաւանութիւն ի վերայ գայցէ. և

անդ շնորհի և յունաց, զի ի տաճարս իւրեանց՝ բաց յաւագ սեղանոյ, և այլս սեղանս կարօղ իցեն կանգնել. յորս լատին քահանայց՝ թէ կամիցին, կարօղ իցեն պատարագ մատուցանել:

ԽԱ. Թայսմ ամենայնէ, որ մինչեւ ցարդ ասացաւ՝ յայտնի ապացուցեալ երեխ, թէ որպէս յառաջ քան զայս, նոյնպէս և յայսմէնտէ պարտ է թոյլ տալ ուղղափառ Հայոց և ասորոց՝ որք ի Բասրա խառն ընդ լատինս բնակին, և չունին զսեպհական եկեղեցի, զի ի լատինացւոց եկեղեցի ժողովեսցին. և յայնմ իւրաքանչիւր ըստ իւրում ծիսի զատուածային պաշտամունս կատարեսցեն. և այս առաւել վասն այնորիկ, զի ոչ միայն ոչ ծագի ինչ անդուստ խառնութիւն ծիսի՝ առացելական սահմանադրութեամբ դատապարտեալ. այլ և մարդասիրութեան կատարին գործը, մանաւանդ թէ լնանին հրամանը հաւասարականը՝ իրաւանց, որ պահանջէ, զի չունողին զպատշան տեղի, ի կատարել զայն՝ զորս իրաւամբը ինչ հրամայեալ է առնել, տեղի ինչ յօժարամիտ շնորհեսցի, վասն այնորիկ ոչ այլ ինչ մնայ, բայց պատուիրել, զի ամենայն ինչ ըստ պարտաւորեալ սիրոյ օրինացն պահանջեսցի. զի խորան ինչ արենելեայց նշանակեսցի, և կամ մասն ինչ եկեղեցւոյ, յոր խմբեսցին զպաշտամունսն իւրեանց կատարել. և ըստ կարի փոյթ լիցի, զի յայլ ժամս լատինց և յայլ ժամս արեւելեայց՝ զպաշտամունսն իւրեանց կատարեսցեն: Զի թէ այլ ազգ ինչ լինիլ գիպեսցի, մերձաւոր առիթ ի ներքս անկանի հակառակութեանց. որք զերկուս նախորդս մեր զՂեռն տասներորդ, և զիղէմէս եօթներորդ, մեծապէս աշխատ արարին. յորժամ յետ դաշնադրութեանցն եղելոց ի Փլորենտեան ժողովն առ Եւգինէոսիւ չորսրորդւ, զի մի՛ նեղութիւն ինչ հասուսցի յունաց ի պահպանութիւնս ծիսից և արարողութեանց իւրեանց, ազգ եղեւ այսուցիկ քահանայապետաց, թէ ոմանց ի լատինացւոց երթեալ յեկեղեցիս յունաց, ի սեղան նոցա լատին ծիսով պատարագս

մատուցանէին, այնու մոօք, զի խափան լինիցին քահանայայիցն յունաց, առ ի չը-կարելոյ նոցա ըստ իւրեանց ծիսի զպատարագ մատուցանել՝ և զիւրեանց պաշտամունսն կատարել. մինչեւ յունաց եր-քեմ անպատարագ մնալ և յաւուրս տո-նից, «Ո՛չ զիտեմք, յորմէ հոգւոյ առաջ-նորդեալք, (զլատին երիցանց է բանն) երբեմ զսեղանս ժողովրդատէր եկեղե-ցեացն աճապարեալ զրաւեն. և անդ ընդ-դէմ կամաց նոցին իսկ յունաց, պատա-րագս մատուցանեն, և թերես և զայլ աս-տուածային պաշտամունս կատարեն. մին-չեւ բազում անգամ այնց յունաց՝ դառ-նացեալ օրտիւր՝ մնալ առանց լսելոյ ըզ-պատարագ ի տօնս և յայլ աւուրս, յորս սովոր էին լսել»: Զայս զանգատ քահա-նայապետաց ի մէջ բերէ յիշատակարանն, որոյ սկիզբն է, սեւլորեան մերոյ և կայ Յենքըրիտիոնի յունաց՝ տպազգրելոյ ի Բիենվենտ յամին 1717 (յէջն 86): Ա-պացէն յիրաւի էր՝ յայնս և զմերս խառ-նել գանգատս, որք ոչ թեթև լինէին, և ոչ ի պատշաճ զեղոց պակասեալ, եթէ ազգ լեալ էր մեզ երբէք, թէ ի Բասրայ լատինը մեր արգելուն զարկելեայս, զի մի՛ ի լատինացւոց եկեղեցիս կարօղ իցեն զիւրեանց պաշտամունս կատարել:

ԽԲ. Այսմ առաջին խնորոյս յաջորդէ երկրորդն՝ վերաբերեալ առ նոյն հայս և ասորիս, որով խնդրի թէ արդեօք նոյնք ի սահմանել զժամանակ զատկի, և այլոց տօնից՝ նմին հետևակաց, կարօղ իցեն վարիլ հին տօմարաւ. թէ մանաւանդ պար-տիցին նոր և ուղեալ տումարի հետեկի, յորժամ ի լատինացւոց եկեղեցիս զպաշ-տամունսն կատարեն. և որպէս զի նոցա օրինաւոր զբացի հնոյն տումարի կիրա-ռութիւն, արգեօք այս սահման պարտա-ւորիցն՝ և զայնս արենելեայս, որք թէպէտ ունին իւրեանց եկեղեցի, բայց այնչափ անձուկ և փոքրիկ, մինչ զի վասն ոչ կարելոյն ժողովիլ ամենեցուն անզր՝ բա-զումք ի նոցանէ ի լատինացւոց եկեղեցիս ստիպին գալ:

ԽԳ. Թայտ է ամենակցուն, որ ինչ ի

սուրբ քահանայապետացն Հոռվմայ՝ ի  
Պիտու և ի Վիկորոք, ևս և ի Նիկոյ  
ժողովոյն՝ յաղագու ուղղի կատարիման զաւ-  
կի օրինադրեցաւ Նոյնպէս յայս է առ  
ամեննեսին, թէ ի Տրդղենտեան ժողովոյն,  
Հոռվմայ քահանայապետին պահեցաւ հո-  
գարարձութիւն ուղղութեան ծումարի և  
հուսկ յետոյ առ քահանայապետութեամբ  
Գրիգորի երեքտասաներորդի, այս իրք ա-  
մենայնիւ վճարեցան Վասն որոյ Բուլին-  
րիս (ի մեկնութեան յաղագու ուսմանց  
ժամանակաց) ի յառաջարանութեան առ  
ընթերցողն, զրէ այսպէս, «Յաղագու ստու-  
գութեան հաշուին զատկականի առ յա-  
պայն, հրամանաւ Գրիգորի երեքտասանե-  
րորդի քահանայապետին, լիով հոգացաւ  
մերս կլաւուս»: Այս էր քահանայ յընկե-  
րութենէն Յիսուսի, քաջանմուս ի մաթէ-  
մաթիջականս. որ յուղղութեան տումարին  
նպաստ մեծ մատոյց քահանայապետին: Առաջի մատուցան նորա և հաշիւք ուրբում  
Ալոփիսի Լիլեանց, որ զբազում ամս ծա-  
խեալ էր ի յօրինել զնոյնս: Ապա կըռեալ  
և ցննեալ զամենայն պարագայ՝ ի բա-  
զում ժողովս, և ի խորհուրդ կոչեալ զա-  
մենայն արս քաջանմուս, յամին 1582  
ել սահմանադրութիւն կանոնագրօց զափա-  
տումարի, որոյ սկիզբն է, ի մէջ ծանունց.  
(ի կարգի 74 երրորդ, ի հին կոնդակագրի.  
Հատոր, երկրորդ):

Թ. Ազգական բ խափասր զայս տեւառարի՝ այսուհեկ սահմանադրութեամբ քահանայապետականաւ, հրամայեցաւ պատրիարքաց, առաջնորդապետաց, արքեպիսկոպոսաց, եպիսկոպոսաց, արքայից, և այլոց առաջնորդաց, զի զնոր և զուղղեալ տումար վարեսցին, որպէս ի նմին սահմանադրութեան ընթերցեալ լինի. և ճոխագոյն ևս քաղի ի տարեզրութեանց նոյնոյ քահանայապետին՝ տպազրելոց ի Հռովմ, (յամին 1742. հատ. 2. յէջն 271): Բայց քանզի ի սահմանադրութեան ոչ ինչ բան եղեւ զարեկելեաց, յայսմանէ խնդիր լինի, թէ այն սահմանադրութիւն արդիօք և զարեկելեայս պարտաւորիցէ. որ ինդիր ոչ միայն ի վարդապետաց զնի, որպէս է

տեսանել առ Ազգորիոսի, (ի բարոյական  
հրահանգու, հատ. Ա. զիբը. Ծ. զլ. 11.  
խնդ. 7) և առ Բաղդադոսի, (յիւրում բա-  
րյական աստուածաբանութեան . հատ.  
Ա. զիբը. Ծ. զիմա. 41) այլ և առաջա-  
զեալ և ըննեալ եղաւ ի ժողով մեծարքի  
արանց՝ խմբելոց ի 4 յուլիսի, յամին  
1631, յապարանն կարդինալին Պամիր-  
լեայ. որ ի ծայրագոյն քահանայապետու-  
թին ամբարձեալ՝ կոչեցաւ Ենովկենտիոս  
տասներորդ: Եւ այսպիսի ել յայնժամ  
որոշում. «Հպատակը չորից պատրիար-  
քաց արևելց ոչ պարանունին նորովք  
սահմանադրութեամբը քահանայապետաց,  
բայց միայն յերիս զիպուածու. նախ ի  
նիւթ վարդապետութեանց հաւատոյ. եր-  
կորորդ, եթէ պապն յայտնապէս ի սահ-  
մանադրութիւնս իր զյիշատակութիւն և  
զկարգագորութիւնն ինչ արասցէ զնոցանէ:  
Երրորդ՝ եթէ լուելեայն ի սահմանադրու-  
թիւնսն յայնոսիկ կարգեցէ ինչ վասն  
նոցա, որպէս ի զիպուածու բողոքմանց առ  
ապազայ ժողով»: Այս որոշումն ի մէջ  
բերի ի թերկեայ, (ի յերրորդ զիրս յա-  
զագու առաջելական միտոնարութեանց. խն.  
83. համար 4) և ի մէնջ իսկ ի զիրս  
մեր, (յաղագս կանոնականութեան սրբոց  
զիբը 2. զլ. 38. համար 15):

ԽԵ. Զայսու խնդրով մեզ զանց առանձ առանձին պահանջ չարկ ի վերայ կայ արդ վիճաբանել զայնմանէ. քանզի շատ է մեզ ցուցանել, զինչ յայսմ մերում իրողութեան, արարեալ իցէ աթոռն առաջ քելական. որովհետև նոյն իսկ յառաջեալ գործը յայտ առնեն, իթէ իմաստութեամբ պատասխանի եղև խնդրոյն, թէ ոչինչ է եռորդիքի: Խտալացի յունաց, որը ի մերում միջի կեան, և ընդ կառավարութեամբ են լատին եպիսկոպոսաց, յորոց ի թեմս հաստատեալ ունին զբանակութիւն, հրամայեցաւ յառաջելական աթոռոյ՝ ըստ նորոյ տօմարի գնաւ. որպէս երեկի ի վերոյիշտառակեալ սահմանազդրութեան մերում, բեկու և հավուական (57. յօդ. 9. համար 3. և յորս զկնի. կոնդակագրիս մերոյ, հատ. Ա): Եւ արդարիք ուխտ միաւ-

բանաւոր եկեղեցւոյ Սրբուհւոյն Մարիամու (Գրափեայ) ի քաղաքին Մեսանայ, որ զյունաց ծէսն ունի, ամենայն զգուշութեամբ զնոր տօմարն պահէ, որպէս է տեսանել յայլում սահմանադրութեան մերում հսովմէական եկեղեցի. (որ է 81 երրդն. յօդ. 1. ի նոյն հատ. Ա. կոնդակագրիս մերոյ). սակայն ոչ այնպէս խստիւ հրամայեցաւ այն. այլ երբեմն ի պահանջել ծանր պատճառաց՝ գերիրաւախոնութեան տուաւ տեղի. Ոչ կամէին ուղղափառ հայր բնակիալը ի Լիգուռնա՝ ընդ Գրիգորեան տօմարաւ մտանել. զրեալ աղաշանս առ Ենովկենտիփոս երկուտասաներորդ, զի թողացուցէ նոցա վարիլ հին տօմարաւ. Քանզի ի ժողովի սրբոյ պաշտաման, ի չորեցարաթի, ի 20 յունիսի յամին 1674 լեալ եր վճիռ այսպիսի. «Ի՞նչ առաջադրին միւսանզամ՝ զրոց առացելական նուիրակին Փլորենտիոյ, յղելոց ի 10 ապրիլի, յաղազս հայցուածոց եղելոց նմա ի Հայոց, աղօթելոյ ի պատարազի վասն կաթուղիկոսին Հայոց, և յաղազս կատարելոյ զգատիկն և զայլ տօնս ըստ իւրեանց ծիսի, այսինքն ըստ հին հաշուին, որ էր յառաջ ցան զուղցութիւն տօմարին, և կատարման զատկին, և այլն. Այլ և ընդ առաջադրիլ զրոյն յղեցելոյ ի սուրբ ժողովոյն տարածման հաւատոյ, ի վերայ եղանակի աղօթելոյն ի պատարազի վասն կաթուղիկոսին Հայոց: Գրեսի (ասէ) անդրէն առ նուիրակն, յաղազս թոյլտութեան աղօթելոյ ի ըստ պասաւորութեան պատարազի՝ վասն կաթուղիկոսին Հայոց, թէ սուրբ ժողովն եկաց ի վճիռն եղեալս ի 7 յունիսի յամին 1673, այսինքն թէ չէ արժան, և ամենակին արգելիք: Իսկ յաղազս կատարելոյ զգատիկն, և զայլ տօնս, և այլն. նոյնպէս կացին ի վճիռ. այսինքն թէ ի կատարման զատկի և այլոց տօնից՝ հայրն եղեալք ի Լիգուռնայ, ամենայն իրօք պարտին պահէ զիրիգորեան տօմարն: «Ապա իրրե ոչ յանձն առին այնքիկ հայր՝ այսմ վճոյ հնազանդիլ, ազդ եղև զայսմանէ մասնաւոր ժողովոյն կարդինալաց

գերակայից յիմաստս. յորոց միջի էին կարգինալ Յովկաննէս Ֆրանջիսկոս Ալբեան. որ ապա զքահանայապիտութեան աթոռն կալաւ. և կարդինալ Ենրիկոս Նորիսիոս, մեծանուն ի մէջ զիտնաւորաց: Այս ժողով, որ եղեւ ի 23 սեպտեմբերի, յամին 1699, զայսպիսի արար վճիռ, ի վերոգրեալ քահանայապետէ ի նմին իսկ աւուր հաստատեալ. Խելամութեամբ խորհեալ զիրսդ, և ամենայն պարագայից ի վերայ հասեալ, ի դէպ համարեցան, ըստ այնց՝ որք առաջադրինն, զիջմամբ գնալ ընդ ուղղափառ Հայս ընակեալս ի Լիգուռնայ, որք զսեպհական եկեղեցի ունին, ի վերայ կիրառութեան հնոյ տօմարի, մինչև տրամադրեցին նորա առ կատարեալ պահպանութիւն Գրիգորեան տօմարի. այլ յայսմ վայրի հանոյ եղեւ առացելական աթոռոյն զայս ևս պայման յաւելուլ, զի ի հրամայեալ տօնս, ըստ Գրիգորեան տումարի զիտեալս, ի ծառայական գործոց ի բաց կալ, և պատարագ տեսանել ամենակին պարտաւորք իցեն»:

Խօ. իսկ թէ զարևելեան յունաց իցէ բանն, յայս է թէ երբեմն առաջադրեցաւ նոցա, զնոր և զուղղեալ տօմարն վարել. սակայն ոչինչ ելս ունեցաւ: Ի պրակս և ի պայմանս առաջադրեալս Ծուսաց՝ ի միարանութեանն խորհեցելոյ և աւարտելոյ առ կղեմաւ ութերորդիւ, եղաւ և ընդունում տօմարի, որում տուաւ պատասխանի. «Ծնոր տօմարն, եթէ հնար իցէ ըստ հնոյն լինիլ, ընկալցուք». որպէս ընթեցեալ լինի ի գործս Ծիսուսեանն ֆովմայի (յէջն 329): Եւ թէպէտ այս պատախանանատուութիւն զերկսայրութիւն իմն ընդ իւր բերէ, սակայն զայսմանէ այլ ոչինչ գտանեմք հօսեցեալ. և ո՛չ ի վերայ այսր մասին՝ զատումն ինչ արար աստուածաբանն կարգեալ առ զննութիւն այսց իրաց. որպէս յայտ է ի նոյն զիրս (յէջն 325. և յորս զինի): Սակայն երբեմն արկելայց ինքնակամ զնոր տումարն ընկալան, որպէս երկի ի ստէպ յիշատակեալ զաւառական Աիւնհողոսն Մարո-

նեաց, որ եղկ յամին 1786. «Թէ ի պահս, և թէ ի տօնս տարւոյն շարժական, կամ անշարժական, զտումարն հռովմէական՝ զողղեալն ի Գրիգորէ երեքտասաններորդէ ծայրագոյն ցահանայապետէ, որ բարերարն է ազգիս մերոյ, յամենայն եկեղեցիս մեր պահէլ՝ խստիւ պատոփիրեմք. և զիանզամանն և զդործածութիւն այնը տումարի, որպէս և զեկեղեցական երգս, յամենայն եկեղեցիս հրամայեմք վարդապետաց, ուսուցանել մանկանց»: Այլ ցորչափ արևելեայց ոչ հաւանեցան, և ցորչափ արդար կասկած կայր ի միջի, թէ գուցէ աղմուկը և տարածայնութիւնը լինիցին, եթէ հրամայեսցի նոցա զնոր տումարն վարեկ տարաւ աթոռն առացելական, զի արևելեայց և յոյնը ի հեռաւոր գաւառունակեալը, զիրեանց հին աւանդութիւնն կալցին. այսինքն, զառաշխին տումարն պահեսցն, սպասելով դիպոզ առթի մուծանելց զգործածութիւնն նոր և ողղեալ տումարի: Յորում միաբանին և գիրոք ժողովոց տարածման հաւատոյ, և պրոյ քննութեան, որպէս ի վերայ առաջնոյն գտանի ի գմիռու եղեալս ի 22 օգոստոսի, յամին 1625, և ի 30 ապրիլի, յամին 1631: Իսկ ի վերայ երկրորդին, ի գմիռու՝ որ ի 18 յուլիսի, յամին 1613, և ի 14 զեկտեմբերի, յամին 1616: Մանաւանդ երբեմն ցայնվայր ժամանեցին իրեն, մինչև միտոնարաց թոյլ տուաւ զին տումարն վարել, ցորչափ մային ի գաւառու, յորս հնոյն տումարի գործածութիւնն միայն կայր. որպէս երեկի ի գմիռու ինչ ժողովոյն տարածման հաւատոյ, հրատարակեալս ի 16 ապրիլի, յամին 1703 և ի 16 զեկտեմբերի, յամին 1704:

Խէ. Մ՞նայ արդ խօսիլ զվերջին խըն-  
դրոյ, այսինքն զպահոց, Ասորից և Հայեց  
ուղղափառը՝ բատ իւրեանց ծիսից՝ յաւուրա-  
պահոց ժութկալեն յուտելոյ զգուկն. բայց  
տեսեալ թէ լատինց ուտեն զայն, և զի՞  
յայլմէ կողմանէ՝ անկարելի կամ գոնէն  
զժուարին թուի՝ ժութկալեն նոցա ի ձկանց,  
զորս տեսանեն լատինաւուց ուտել, վասն  
պասորիկ իրոք բանաւոր իմն առաջադրի,

զի հրաման տացի միսոնարաց՝ տնօրինել նոցա, սակայն զգուշութեամբ, և առանց ինչ զայթակղութիւն դնելոյ, և զրաբե-պաշտական ինչ գործ փոխանակելով ի տեղի ժուժեկալելոյ ի ձկանց, կարի իսկ ի դէպ էք յայսմ զայրի խօսիլ զավանջակա-նութենէ պահոց առ արեւելեայս, և զօրի-նաց նորա, որ թէպէտ խստի բայց կա-տարելապէս միշտ պահեցաւ, Այլ զի մի՛ ցան զարժանն յերկարեցին բանքը, զայս մի ինչ ասասցուց, Ալոյն առացելական ընդունմ եկաց պատրիարքաց, բանից ան-գամ զին խստութիւն պահոց՝ զեղեալն ի վերա հպատակաց նոցա թուլացուցանել կամեցան, Պետրոս պատրիարք Մարո-նեաց շնորհեաց արենավիկոպոսաց և ե-պիսկոպոսաց իւրոց հպատական, ուտել միս իրեւ զաշխարհնախան. թէպէտ ըստ հին վարդապետութեան՝ ժուժեկալին նորա ի մոց, իսկ համօրէն ժողովրդեան ի բա-ռասնորդաց պահս թոյլ ետ ճուկն ուտել և զինի ըմպել, թէպէտ և արգելեալ էք նոցա այն, Այլ բահանայապետն Պօղոս հինգերորդ զրեալ առ պատրիարքն յաշորդ Պետրոսի՝ թուղթս առացելականս ի ձե նամակի ի 9 մարտի, յամին 1610 հրա-մայեաց, զի խափանեալ զամենայն զոր ինչ շնորհեալ էք Պետրոս պատրիարքն, անդրէն յառաջին սահման հաստատեացին իրբն: Ի բահանայապետութեան մերում ի քննութիւն եկն կարի իմ զիջանողութիւնն և ներողութիւնն Եվմիմիոսի արհեապիսկո-պոսին Տիւրոսի և Սիղոնի, և Կիւրզի Ան-տիոքայ պատրիարքին առ Մելքեան յոյնս, և բասեւի ցուցաւ, որպէս յայտ է ի սահ-մանազրութենէ մերմէ: (Զյանենեալի 87. յօդ. 6. Կոնդակազրի մերոյ, հասոր 1): «Մեր զայնպիսի փոփոխութիւն և զպա-նոց թուլացուցումն և զիստացուցումն, (տեսեալ թէ շրջի ի մեծ վկաս նախնոյ վարդապետութեան եկեղեցւոյն յունաց), թէպէտ և յայլմէ կողմանէ իսկ ոչինչ զօրութիւն ունէին, չունելով զառացելա-կան աթոռոյն հեղինակութիւն, սակայն հեղինակութեամբ մերով՝ յայտնապէս յետս կոչեմք. և զոյինչ ներգործութիւն ունիլ

առ յապայն, և ոչ իւկը իրօք ի գործ գունել, այլ զամենայն անդրէն յառաջին կարգն հաստատել հրամայեմք. այլ և ի բովանդակ սահմանս պատրիարքութեան Անտիռայ զգովեի սովորութիւնն ի նախնեաց յառաջ եկեալ, ժումկալելոյ յիրացանչիր չորեքշարաթի և ուրբաթու տարւոյն ի ձկանց, որ և յայլ սահմանակից ժողովրդոց նոյնոյ յունական ծիսի անվրէպ պահի, նոյնօրինակ պահել հրամայեմք»: Ապա զժպատեհ իմն է ասել, թէ յիրափ է շնորհել զտօրինութմ, կամ մանաւանդ զընդհանրական հրաման տնօրինելոյ. իրը զի տեսեալ արեելեայց, թէ լատինը ուտեն ձուկն ի ժամանակս պահոց, յայսմանէ և ինքեանը յորդորին՝ «չ արհամարհանօց ինչ, այլ ի տկարութենէ քնութեան յաղթեալը՝ ուտել ծուկն յաւուրս պահոց: Զի այլու ձեռնարկութեամբ՝ եթէ արժէր ինչ, նախ առաջին ամենայն իրօք մտանէր խանգարութիւն ծիսից. և երկրորդ եթէ ունէր այդ զտեղի, ապա և լատինը տեսեալ թէ յոյնք սեպհական իմն օրէնս ունին, որ ոչ թողացուցանի լատինացոց, այլ մանաւանդ արգելեալ է նոցա, կարէին տնօրինութմ խնդրել, զի և ինքեանց օրէն իցէ առնել զոր ինչ տեսանեն յոնաց առնել, ասելով թէ ընդունին զծէն լատինական. բայց առ տկա-

րութեան բնութեան ոչ կարեն պահել զայն ընդերկար: Այս բանց են՝ զոր ձեռն ար կար մեկնել յայսմ մերում հանրական թղթի, ոչ միայն ի յայտ առնել զիւմուն, յորս հաստատին պատասխանատութիւնը եղեալը առ միսոնարն, որ զնախագրեալ խնդիրն առաջարկեաց, այլ և զի ամեննեցուն ծանիցի ցաղցրութիւնն, որով աթոռն առաքելեական խանդաղատեալ գիրկս արկանէ զարկելեան ուղղափառոր, ի պատուիրել իւրում, զի ամեննեին պահեցին հին ծէսը նոցա, որը ոչ ուղղափառ կրօնի՝ և ոչ համեստութեան են հակառակը. և ոչ ի հերձուածողաց յուղղափառ միութիւն դարձելոց պահանջէ, զի զիւրեանց ծէս թողցնեն, այլ զի ի հերձուածոց միայն ի բաց կացցեն և խորշեցին. մեծապէս տենչացեալ, զի զանազան ազգը նոցա պահեցին, և ոչ թէ եղծցին. և (ի համառօտ բովանդակեալ) զի ամեննեցին ուղղափառը իցեն, և ոչ թէ լատինը լինիցին: Ապա զթուղթ մեր զայս յաւարտ հասուցեալ, ամենայնի որոց ընթեռնուցունն զսա՝ շնորհեմք զառաքելական օրհնութիւն:

Տուալ ի Հռովմ, առ Աւագ սուրբ Աստուածնին ի 26 յուլիսի, յամին 1705. ի հնգետասաներորդ ամի ցահանայապետութեան մերոյ:

Վ. Ե Ր Զ

## ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐ

Մ'եր նախնիք մեզի փոխանցեցին մատենագրութիւն մը, ոսկեղարու հայերէն մը, եկեղեցական գրքերու հարուստ թարգմանութիւններ, և հայ շէնքերու աւերակներ ու զրչագիր մատեններու մէջ պահուած շէնշող պատկերներ, զարդեր:

Հնին մեզի անցան այդ մոքի գեղեցկութիւնները, որոնք մերն ըլլալով, աւելի յատուկ գուրգուրանքով մեր սիրտը անոնց հետ կը կապուի:

Համակրութիւնը հրաշալի գեր մը կը կատարէ զգացմունցի դատութեան վրայ, կը կարդանը զանազան վէափեր, ու երբ վիպագիրը